ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/147

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 10.06.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2021թ. թիվ 26/26-1/9052-2021 գրությամբ «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 26.05.2021թ. թիվ 01/61-12176 գրության հիման վրա, 07.06.2021թ. թիվ 26/26-1/9052-2021 գրությամբ նախաձեռնել է «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.06.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից 25.03.2021թ. հայտարարվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից, որից հետ անգործության ավարտից հետո կառաջարկվի կնքել պայմանագիր:

14.04.2021թ. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.04.2021թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 14.04.2021թ. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանգիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.04.2021թ. / պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և Ընկերությունը «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանգիր կնքելու իրավունքից:

Ա) ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնրում ենք նկատի ունենալ, որ աստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակցի համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ համաձայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության, Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, այն է՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը:

Տվյալ պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

Նախ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից, որին անգործության ավարտից հետո կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ավելին, այս ողջ ընթացքում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչները փորձել են ստանալ տեղեկատվություն պայմանագրի նախագծի վերաբերյալ, սակայն ապարդյուն:

Պատվիրատուն սահմանված կարգով և ժամկետում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին չի ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը (ավելի կոնկրետ, Ընկերությունը չի ստացել այդ նախագիծը), որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝

14.04.2021թ. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանգիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.04.2021թ. /պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և Ընկերությունը «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանգիր կնքելու իրավունքից:

Եթե գոնե Պատվիրատուն www.armeps.am համակարգով պայմանգրի շնորհում ուղարկեր ՍՊԸ-ին, ապա գոնե այդ ճանապարհով Ընկերությունը կտեղեկանար, որ սկսվել է պայմանագիր ստորագրելու փուլ: Մինչդեռ պայմանագրի շնորհում չի եղել (համապատասխան ապացույցը՝ արտատպումը www.armeps.am համակարգից կցվում է): Այս փաստը պարզելու համար բողոքներ քննող անձը նույնպես կարող է համապատասխան հարցում կատարել armeps համակարգը սպասարկող ընկերությունը, որը կապացուցի մեր հայտնած փաստը:

Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Բ) Բացի այդ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Երևանի քաղաքապետարանը 26.05.2021թ. թիվ 01/61-12176 գրությամբ ներկայացրել է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը՝ հիմքում դնելով «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետը, որով ընդամենը արձանագրվել է, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն պայմանագիրը և ապահովումները ետք է մինչև 28.04.2021թ. ներկայացներ Պատվիրատուին:

Մինչդեռ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու իրավունքից զրկվել է արդեն 29.04.2021թ., քանի որ 28.04.2021թ. դրությամբ հայտը մերժելու հիմքը, ուստի «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին “Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում” ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի ի հայտ են եկել 29.04.2021թ. և հետևաբար հիմքերը պետք է ներկայացվեր լիազոր մարմին մինչև 06.05.2021թ.:

Այսինքն, անհասկանալի պայմաններում «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելուց միայն մի մեկ ամիս անց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար: Մասնավորապես, Պատվիրատուի կողմից «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը 26.05.2021թ., մինչդեռ Կարգի 45-րդ կետի պահանջների համաձայն՝ պետք է ներկայացվեին մինչև 06.05.2021թ.:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի

նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ մի շարք ընթացակարգեր:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/147 ընթացակարգի շրջանակներում 17.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոշարադրվածը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2021թ. թիվ 01/61-12176 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 25.03.2021թ. հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 14.04.2021թ. Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիրը և վերը նշված ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետև՝ օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/147 ընթացակարգի շրջանակներում 17.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Նալբանդյան 25/14 հասցեի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 14.04.2021թ. ծանուցել է «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 14.04.2021թ. «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.04.2021թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և որոշում է կայացրել Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2021թ. թիվ 26/26-1/9052-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 26.05.2021թ. թիվ 01/61-12176 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան քաղաքի

Կենտրոն վարչական շրջանի Նալբանդյան 25/14 հասցեի բակային տարածքի և խաղահրապարակի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 14.04.2021թ. ծանուցել է «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 14.04.2021թ. «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/22» ծածկագրով պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 28.04.2021թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել և որոշում կայացրել Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում շինարարական աշխատանքների գնման դեպքում պայմանագրում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և</u>***

պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում, համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Պատվիրատուն Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 14.04.2021թ. ծանուցել է «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, որը Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ 28.04.2021թ. ներառյալ, հաստատված պայմանագիրն ապահովումների հետ միասին պետք է ներկայացներ Պատվիրատուին: Սակայն, Պատվիրատուն 28.04.2021թ. հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները չստանալու պայմաններում, գրեթե մեկ ամիս անց՝ 24.05.2021թ. միայն հրավիրել է արտահերթ նիստ և արձանագրել 28.04.2021թ. ի հայտ եկած՝ Ընկերության կողմից թույլ տրված խախտման փաստը և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ թեև Օրենսդիրը չի սահմանել հստակ ժամկետ խախտման փաստն ի հայտ գալուց հետո Պատվիրատուի կողմից այն արձանագրելու համար, այնուամենայնիվ, հաշվի առնելով իրավահարաբերության բնույթը, գտնում եմ, որ խախտման փաստն ի հայտ գալուց հետո Պատվիրատուի կողմից այն պետք է արձանագրվի ողջամիտ (սեղմ) ժամկետում, որը տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից ակնհայտորեն չի պահպանվել:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2021թ. թիվ 26/26-1/9052-2021 գրությամբ «Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**